

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Գլխավոր ինժեներ-մեխանիկ
ՎԵՐԱԴԱՍԸ	Վերամշակման գծով մենեջեր
ԺԱՄԿԵՏԸ	Երկարաժամկետ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ	Վայոց Ձոր, Ամուլսար
ԱՍՏԻՃԱՆԸ	

ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ

- ✓ «Լիդիան Արմենիա» ընկերությունը հանդիսանում է մինչ այժմ Հայաստանում արտասահմանյան խոշորագույն ուղղակի ներդրումներ կատարած միջազգային ընկերությունը:
- ✓ Լիդիանի կողմից հրավիրվել են միազգային համբավ ունեցող ինժեներական ընկերություններ և խորհրդատուներ Վայոց Ձորի մարզում տարեկան 10 միլիոն տոննա հանքաքարի տարեկան արտադրողականությամբ հանքի և վերամշակման գործարանի նախագծման համար:
- ✓ Աշխատանքային գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է առաջատար լավագույն մեթոդները՝ սահմանելով Առողջապահության, տեխնիկական անվտանգության, բնապահպանության և սոցիալական պատասխանատվության ամենբարձր չափորոշիչները:
- ✓ Հանքն ու վերամշակման հանգույցները ներկայումս գտնվում են շինարարության փուլում, իսկ դրանց գործարկումը նախատեսված է 2018թ-ի 3-րդ եռամսյակում:
- ✓ Ներկայումս Լիդիան Արմենիա ընկերության կողմից իրականացվում է շահագործման նախապատրաստական աշխատանքներ, որոնք ներառում են նաև կապալառուներից բացի ավելի քան 700 տեղացի մասնագետների հավաքագրում մշտական աշխատանքի համար:

ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

Նախատեսվում է տարեկան մոտ 10 միլիոն տոննա հանքաքարի տեղափոխում՝ իրականացնել հանքից դեպի վերամշակման գործարան: Հանգույցների թվին են պատկանում՝ ջարդման ու տեսակավորման հանգույցը, 5կմ դեպի ներքև իջնող վերգետնյա փոխակրիչը, հանքաքարի փոխադրման կայանը, կույտային տարրավազման հարթակը և ոսկու հարստացման գործարանը:

Ջարդիչ կայանի ու վերգետնյա փոխակրիչի միջով անցնող մանրացված հանքաքարի ծավալը կկազմի 1400-1600 տոննա ժամում:

Հանքում և վերամշակման գործարանում օգտագործվող բոլոր սարքավորումները ձեռք են բերվում հայտնի միջազգային ընկերություններից, որոնցից են՝ շվեդական Sandvik, շվեյցարական ABB Switzerland և Caterpillar-ը:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆՇԵՆԵՐ-ՄԵԽԱՆԻԿ ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիդիան Արմենիա ընկերությանն անհրաժեշտ է փորձառու և մոտիվացված ճարտարագետ՝ Ամուլսարի վերամշակման գործարանի Գլխավոր ինժեներ-մեխանիկի պաշտոնը զբաղեցնելու

համար, որը հաշվետու է լինելու Վերամշակման գծով մենեջերին: Գլխավոր ինժեներ-մեխանիկը պատասխանատու է լինելու ողջ վերամշակման գործարանի անվտանգ ու արդյունավետ սպասարկման համար՝ կենտրոնանալով աշխատանքի դադարեցման պլանավորման և աշխատանքի բարելավման վրա:

Նախնական շրջանում ընտրված թեկնածուն պետք է զբաղվի գործարկման նախապատրաստական աշխատանքներով, մասնավորապես՝ հավաքագրի անհրաժեշտ աշխատողներ, վերապատրաստի կադրեր ու ներդնի համակարգչային հիմքով պլանավորման համակարգ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Լիդիան Արմենիա ընկերությունը փնտրում է հանքարդյունաբերության ոլորտում փորձ ունեցող եռանդուն և մոտիվացված ինժեներներին:

Ընտրված թեկնածուն պետք է առաջնորդվի անվտանգության բարձր չափանիշներով և պատրաստակամ լինի սովորել և կիրառել տեխնիկական անվտանգության ամենաարդիական մեթոդները:

Թեկնածուն պետք է ունենա

- ✓ Կառավարման և ղեկավարման փորձ
- ✓ Ճարտարագիտության կամ հարակից ոլորտում կրթություն և մեծ փորձ
- ✓ Գործարանի անջատումների կառավարման, պլանավորման և իրականացման փորձ
- ✓ Տեխնիկական սպասարկման համակարգչային կառավարման համակարգերի փորձ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Աշխատանքային գործունեության վայրը լինելու է Գնդեվազի հարևանությամբ գտնվող հանքի տեղամասը, աշխատողները կբնակվեն Ջերմուկում, որը հանդիսանում է Հայաստանում առաջատար տուրիստական վայրերից մեկը: Աշխատանքային հերթափոխը հնարավորություն կտա բավականաչափ ժամանակ անցկացնել Վայոց Ձորից դուրս՝ թեկնածուի ընտրությամբ:

Ըստ անհրաժեշտության կտրամադրվի նոր տեխնոլոգիաների վերաբերյալ ուսուցում: Ընտրված թեկնածուին կառաջարկվի համապատասխան մրցունակ աշխատավարձ:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Բոլոր շահագրգիռ թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները hr@lydianinternational.co.uk հասցեին: Անհրաժեշտ է նշել հայցվող պաշտոնի անվանումը հաղորդագրության թեմա տողում: Հարցազրույցի կիրավիրվեն նախապես ընտրված թեկնածուները:

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

Փետրվարի 05, 2018

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ

Փետրվարի 16, 2018